



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԼՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 10 (467) «14» ապրիլի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
170	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի ՆՀ-884-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-657-Ն հրամանագիրը.....	4
171	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-658-Ն հրամանագիրը.....	5
172	«Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը վերակազմակերպելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2013 թվականի մարտի 13-ի ՆՀ-13-Ն հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-659-Ն հրամանագիրը.....	6
173	«Մասնակի զորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-660-Ն հրամանագիրը.....	7
174	«Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի օգոստոսի 12-ի ՆՀ-2754-Ն հրամանագրում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-661-Ն հրամանագիրը.....	8
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
175	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի N 462 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 377-Ն որոշումը.....	11
176	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԱՀ կառավարության N 378-Ն որոշումը.....	13
177	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 724 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 384-Ն որոշումը.....	14
178	«Որսորդական մինիմումի կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 385-Ն որոշումը.....	15
179	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 387-Ն որոշումը.....	18

180	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 393-Ն որոշումը.....	19
181	«Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 396-Ն որոշումը.....	20
182	«Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի N 170-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 397-Ն որոշումը...	25
183	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 400-Ն որոշումը...	26
184	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 17-ի N 277-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 402-Ն որոշումը.....	27
185	«Տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր փաստաթղթի ձևը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 404-Ն որոշումը.....	28
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
186	««Արցախեներգո» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիո-հաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 9-Ա որոշումը.....	30
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
187	«Անհատ ձեռնարկատեր «Ազա Ղազարյան Արկադիի» դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 73-Ա հրամանը.....	31
189	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հուլիսի 6-ի N 134/Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 121-Ն հրամանը.....	32
190	««ԲԵՐԴԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ	

	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի N 24 հրամանը34
191	«ՖԱՎՈՐԻՏ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի N 37 հրամանը ...	35
192	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության 28-Ա հրամանը	36
	ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՈՒԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
193	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԲԴ/0518/02/21 որոշումը.....	37

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՆՀ-884-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-884-Ն հրամանագրի 3-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետ.

«5.1) պետական տեսչությունների կառավարման կոմիտե.»:

2. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող որոշումներ:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 12
Ստեփանակերտ
ՆՀ-657-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված հավելվածի 105-րդ կետի 4.1-ին ենթակետում «նյութական վնասների հարցերի կոմիտեի նախագահին,» բառերից հետո լրացնել «պետական տեսչությունների կառավարման կոմիտեի նախագահին,» բառերը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 12
Ստեփանակերտ
ՆՀ-658-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ՆՀ-13-Ն
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը վերակազմակերպել՝ միացնելով Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեին:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2013 թվականի մարտի 13-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի երկրագործության պետական տեսչությունը և անասնաբուժական և անասնապահական պետական տեսչությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի վերակազմակերպելու մասին» ՆՀ-13-Ն հրամանագիրը:

3. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող իրավական ակտեր:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 12
Ստեփանակերտ
ՆՀ-659-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՄԱՍՆԱԿԻ ԶՈՐԱՑՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 24-րդ կետը և «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» օրենքի 22-րդ հոդվածի «դ» կետը՝ **որոշում եմ**.

1. 2022 թվականի մարտի 25-ին հայտարարված մասնակի զորահավաքի շրջանակներում կատարել զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների մասնակի զորացրում:

2. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ ելնելով զինված ուժերի խնդիրներից՝ ապահովել սույն հրամանագրի կատարումը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 12
Ստեփանակերտ
ՆՀ-660-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ՆՀ-2754-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի օգոստոսի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրականացվող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-2754-Ն հրամանագրում (այսուհետ՝ հրամանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) հրամանագրի նախաբանում «8-րդ հոդվածի 1-ին մասի 7.1-ին և 16-րդ կետերը» բառերը փոխարինել «8-րդ հոդվածը» բառերով.

2) հրամանագրում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ.

«1.1. Սահմանել Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները՝ համաձայն հավելվածի:».

3) հրամանագիրը լրացնել հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 13
Ստեփանակերտ
ՆՀ-661-Ն

Հավելված
Արցախի Հանրապետության Նախագահի
2022 թվականի ապրիլի 13-ի ՆՀ-661-Ն հրամանագրի

«Հավելված
Արցախի Հանրապետության Նախագահի
2021 թվականի օգոստոսի 12-ի ՆՀ-2754-Ն հրամանագրի

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր
ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱԾՄԱՆ

1. Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում, ելնելով պետական և հասարակական արտաքին և ներքին անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, ռազմական բնույթի տեղեկատվության, պետական անվտանգությանը վերաբերող ոչ ռազմական բնույթի տեղեկատվության, Արցախի Հանրապետության սահմանային իրավիճակին վերաբերող տեղեկատվության և հրապարակումների, մարտական տեխնիկայի, զինված ուժերի և այլ զորքերի վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ տեղեկությունների (այսուհետ բոլորը միասին՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով (այսուհետ՝ հրապարակում), կատարվում է բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված կամ հրապարակված պաշտոնական տեղեկատվության (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղումով՝ ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունը (առանց խմբագրման):

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները (այդ թվում՝ ելույթները, հրապարակումները) առերևույթ կեղծված ներկայացվող և (կամ) հերքող հաղորդումների հրապարակումն արգելվում է:

3. Արգելվում է Արցախի Հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության դեմ ուղղված քարոզչությունը:

4. Հաղորդումների հետ կապված պաշտոնական հայտարարություններով հանդես են գալիս Արցախի Հանրապետության Նախագահը, Արցախի Հանրապետության համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմինները, իսկ այլ անձինք՝ Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ:

5. Հաղորդումները հրապարակվում են Արցախի Հանրապետության Նախագահի մամուլի քարտուղարի կամ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության կամ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմինների ղեկավարների կամ լիազորված ներկայացուցիչների միջոցով:

6. Պաշտոնատար անձինք և պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներն իրենց լիազորությունների շրջանակներում կարող են հանդես գալ հաղորդումների վերաբերյալ հայտարարություններով և մեկնաբանություններով միայն Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության հետ համաձայնեցված դիրքորոշումներին համապատասխան:

7. Սույն հավելվածի 1-3-րդ կետերով նախատեսված կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն է իրականացնում Արցախի Հանրապետության ոստիկանությունը: Արցախի Հանրապետության ոստիկանությունն իրավասու է

անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ապահովելու հրապարակված հաղորդումների և տեղեկությունների վերացումը, իրականացնելու տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի ժամանակավոր առգրավում կամ կալանք:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ.ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլի 2022թ.

N 377-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 462 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի «Արցախի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 462 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «օրենքի» բառով.

2) որոշման 5-րդ կետում «պետական կազմակերպության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ պետական կազմակերպություն)» բառերով.

3) որոշման 9-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«2. Պետական կազմակերպությունը գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Արխիվային գործի մասին» օրենքներին, այլ օրենքներին ու իրավական ակտերին համապատասխան:».

բ. 7-րդ կետում «ԱՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

գ. 14-րդ կետում «Ֆինանսների» բառից հետո լրացնել «և էկոնոմիկայի» բառերը.

դ. 20-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

ե. 29-րդ կետում «կազմակերպությունը» բառից առաջ լրացնել «պետական» բառը.

զ. 37-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական» բառերը փոխարինել «Քաղաքացիական» բառով.

5) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 8-ի N 377-Ն որոշման

«Հավելված թիվ 2
ԼՂՀ կառավարության
«26» նոյեմբերի 2004թ. թիվ 462 որոշման

ՑԱՆԿ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Ներկայացուցչության անվանումը
1.	Ասկերանի տարածքային ներկայացուցչություն
2.	Մարտակերտի տարածքային ներկայացուցչություն
3.	Մարտունու տարածքային ներկայացուցչություն

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլի 2022թ.

N 378-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 23-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է**.

1. 2022 թվականի ապրիլի 18-ի աշխատանքային օրը տեղափոխել 2022 թվականի ապրիլի 23-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 ապրիլի 2022թ.

N 384-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 724 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Նորաստեղծ ընտանիքների համար ամուսնության նպաստ սահմանելու մասին» N 724 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 3-6-րդ կետերում, որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետում «աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերը փոխարինել «սոցիալական զարգացման և միգրացիայի» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետ.

«2.1 Մինչև 2024 թվականի հունվարի 1-ը նպաստի իրավունք ունեն նաև 50 տարին չլրացած անձինք՝ սույն կարգի պայմաններին բավարարելու դեպքում:»,

բ. 3-րդ կետում «գ» ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» ենթակետ.

«դ) «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ «Արցախբանկ» ՓԲԸ) իր անվամբ բացված բանկային հաշվի մասին տեղեկանքը կամ վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմանագիրն ու պատճենը:»,

զ. 3-րդ կետի 2-րդ պարբերությունում ««Զինվորական ծառայություն անցնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով» բառերով.

դ. 5.1-ին և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

ե. 6-րդ կետի «բ» ենթակետում «Ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերով.

զ. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Նպաստի վճարումները իրականացվում են անկանխիկ եղանակով՝ դիմումում նշված՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ում բացված հաշվին փոխանցելու միջոցով:»,

է. 11-րդ կետից հանել «, 7-րդ կետում նշված վճարման ցուցակի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության, որի գործողությունը տարածվում է 2022 թվականի մարտի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 ապրիլի 2022թ.

N 385-Ն

ք. Ստեփանակերտ

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒՄԻ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**.

1. Սահմանել որսորդական մինիմումի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԻ

1. ՈՐՄԻ ՄԻՆԻՄՈՒՄԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են որսորդության մինիմումի պահանջներ, որոնք ներառում են՝ որսի անվտանգության տեխնիկայի, որսորդական զենքի հետ վարվելու կանոնների և որսի կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ սիրողական որսի համար մշակված անհրաժեշտ գիտելիքների ամբողջություն:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են Արցախի Հանրապետության այն քաղաքացիների վրա, որոնց 18 տարին լրացած է, ովքեր «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքով սահմանված կարգով հանձնել են տվյալ որսորդական մինիմումը՝ տեղեկացման և գիտելիքների ստուգմամբ ու տրամադրվել որսով զբաղվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (այսուհետ՝ որսորդական միասնական վկայական):

3. Ըստ սույն մինիմումի պահանջների՝ տեղեկացումը, որսորդության ոլորտում գիտելիքների ստուգումն ու որսորդական միասնական վկայականի տրամադրումն իրականացվում է քննության կազմակերպմամբ և անցկացմամբ լիազորված մարմնի ստեղծած մասնագիտական հանձնաժողովի կողմից՝ հարցազրույց իրականացնելու միջոցով:

2. ՈՐՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՑԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4. Որս իրականացնելիս չի թույլատրվում կրակել՝

1) մարդկանց ուղղությամբ, ինչպես նաև այն դեպքում, երբ արկը կարող է անցնել նրանցից ավելի քան 15 մետր հեռավորության վրա:

2) ոչ պարզ տեսանելի նշակետի ուղղությամբ:

3) այն դեպքերում, եթե որսորդը չի տեսնում կամ չգիտի արկի կանգառման տեղը՝ հաշվի առնելով արկի թռիչքի հեռավորությունն ու անդրադարձի հնարավորությունը:

5. Որսի իրականացման ժամանակ չի թույլատրվում լքել այն վայրերը, որոնք նախապես որոշված են որսի անցկացման համար պատասխանատու անձի կողմից առանց այդ անձի բանավոր թույլտվության:

6. Չի թույլատրվում որս իրականացնել ակոհոլի և (կամ) թմրադեղերի ազդեցության տակ:

7. Վիրավոր կենդանուն մոտենալիս անհրաժեշտ է հատուկ զգուշություն ցուցաբերել հաշվի առնելով նրա վտանգավորության աստիճանը:

8. Անհայտ պատճառներով սատկած կենդանիների հայտնաբերման դեպքում որսորդին չի թույլատրվում դրանց ձեռք տալ և օգտագործել սննդի մեջ:

9. Սատկած կենդանու դիակ հայտնաբերելիս որսորդն անմիջապես այդ մասին տեղեկացնում է որսորդության վայրի անասնաբուժական ծառայությանը կամ համայնքը սպասարկող անասնաբույժին (այսուհետ՝ անասնաբույժ): Կենդանու դիակի թաղումը կատարվում է անասնաբույժի ներկայությամբ և ցուցումներով՝ ապահովելով հակաանասնահամաճարակային կանոնների պահպանումը:

10. Որսորդը պետք է ունենա տեղանքում կողմնորոշվելու հմտություններ:

11. Որսորդը պետք է ձգտի կատարելագործել և ընդլայնել իր անվտանգության գիտելիքները որսորդության իրականացման ժամանակ, այդ թվում՝ որսորդական զենքի հետ անվտանգ վարվելու, տեղաշարժվելու, կողմնորոշվելու, որսահանդակներում հանգստի վայրեր սարքելու հմտությունները՝ նկատի ունենալով, որ իր անձնական գիտելիքներից, հմտություններից և փորձառությունից է կախված ինչպես իր, այնպես էլ իրեն շրջապատող մարդկանց կյանքն ու առողջությունը:

3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՈՐՍՈՐԴՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼԻՍ

12. Որսորդական հրազենի հետ վարվելիս անհրաժեշտ է՝

1) որսորդական հրազենի հետ միշտ վարվել այնպես, կարծես այն լիցքավորված է և պատրաստ է կրակելուն.

2) պահպանել որսորդական հրազենի անձնագրում (շահագործման հրահանգներում) շարադրված անվտանգության պահանջները և շահագործման առանձնահատկությունները.

3) կրակոցից առաջ և հետո ստուգել օտար մարմինների առկայությունը փողերում և անհրաժեշտության դեպքում դրանք հեռացնել.

4) որսորդական հրազենի խափանման դեպքում բացել հրազենի փակադակը ոչ շուտ, քան 5 վայրկյան անց:

13. Որսորդական հրազենի հետ վարվելիս չի թույլատրվում՝

1) պահել հրազենը մարդկանց ուղղությամբ.

2) լրացնել կամ հրել փամփուշտն ուժով.

3) միաժամանակ կրակել որսորդական հրազենի երկու փողերից.

4) կիրառել փամփուշտներ, որոնք նախատեսված չեն տվյալ մոդելի որսորդական հրազենից կրակելու համար.

5) օգտագործել անսարք փամփուշտներ, պիտանելիության ժամկետը լրացած փամփուշտներ կամ փամփուշտներ, որոնք համալրված են այնպիսի առարկաներով, որոնք նախատեսված չեն տվյալ տեսակի որսորդական հրազենի մեջ որպես խոցող տարրեր օգտագործելու համար.

6) ինքնուրույն կատարել որսորդական հրազենի հիմնական հանգույցների և մեխանիզմների (կափարիչ, թմբուկ, շրջանակ) վերանորոգում, դրանցում կատարել կառուցվածքային փոփոխություններ:

14. Տվյալ անվտանգության պահանջները համարվում են որպես կանոններ:

15. Որսորդական օդաճնշիչ զենքով ոչ ավելի, քան 25 ջոուլ փողային էներգիայով վարվելիս խորհուրդ է տրվում անմիջապես նման զենքի մեջ օգտագործվող գազի բալոնի փոխարինումից առաջ՝ կրակահերթ իրականացնելով սպառել բալոնում մնացած գազը:

16. Որսորդական սառը շեղբավոր զենքի հետ վարվելիս արգելվում է օգտագործել այնպիսի զենք, եթե դրա շեղբերը ամուր ամրացված չեն բռնակներին:

4. ՎԱՅՐԻ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Որսորդը պետք է ձգտի կատարելագործել որսի կենդանիների վերաբերյալ ունեցած իր գիտելիքները, այդ թվում՝ տարվա տարբեր եղանակներին դրանց արտաքին տեսքի առանձնահատկությունները, արունների և էգերի, մատղաշ կենդանիների և հասուն կենդանիների տարբերակիչ գծերը, դրանց անատոմիկ առանձնահատկությունները, որպեսզի կարողանա տարբերակել որսի ռեսուրսի օգտագործման ռեսուրսներն ըստ սեռի և տարիքի, դրանք տարբերել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքի կենդանիների ցանկում գրանցված կաթնասուններից և (կամ) թռչուններից, ինչպես նաև կանխել որսի ռեսուրսի օգտագործման օբյեկտների վնասումը:

18. Որսի կենդանիների ցանկի հաստատումը, դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանում է լիազորված մարմինը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 ապրիլի 2022թ.

N 387-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ յ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ա. Առաքելյան փողոցի 1-ին փակուղի թիվ 3/1 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,0085 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2022թ.

N 393-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորման կարգը և Արցախի Հանրապետության չգազաֆիկացված բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» N 57-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման նախաբանում ««Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան» բառերը փոխարինել «Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին, 3-րդ և 8-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 5-րդ կետում «Օպերատորը» բառը փոխարինել «Մատակարարը» բառով, իսկ «Էկոնոմիկայի և արտադրական» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և» բառերով,

գ. 6-րդ կետում «երկու» բառը փոխարինել «յոթ» բառով,

դ. 6-րդ և 7-րդ կետերում «ֆինանսական և հաշվապահական հաշվառման բաժին» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ֆինանսատնտեսական վարչություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

ե. 7-րդ և 8-րդ կետերում «Արցախի Հանրապետության ֆինանսների» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի ցանկի «2. ԱՀ ԱՍԿԵԼՄԱՆԻ ՇՐՋԱՆ» բաժնի 8-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ և 10-րդ տողերը.

«

9.	Իվանյան չգազաֆիկացված հատված
10.	Խնածախ չգազաֆիկացված հատված

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2022թ.

N 396-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**։

1. «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի NN 1, 2.3, 2.5, 3.1 և 3.5 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի NN 1, 2.3, 2.5, 3.1, 3.3 և 3.5 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աղյուսակ N 1

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
08			ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	-
	2		Մշակութային ծառայություններ	-	-	-	-
		3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	2 214,0	6 954,0	11 023,2	16 275,3
		01	Պետական աջակցություն մշակույթի տներին և կենտրոններին	2 214,0	6 954,0	11 023,2	16 275,3
			Հաղորդի շրջանի վարչակազմ		1 356,0	2 168,4	3 254,2
			Շուշիի շրջանի վարչակազմ	2 214,0	5 598,0	8 854,8	13 021,1
		5	Արվեստ	(2 214,0)	(6 954,0)	(11 023,2)	(16 275,3)
		03	Պետական աջակցություն համերգային կազմակերպություններին	(2 214,0)	(6 954,0)	(11 023,2)	(16 275,3)
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	(2 214,0)	(6 954,0)	(11 023,2)	(16 275,3)
		7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	-	-	-	-
		01	Պետական աջակցություն «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	1 890,0	8 111,0	6 375,0	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	1 890,0	8 111,0	6 375,0	
		02	Հուշարձանների վերականգնման և պահպանման ծախսեր	(1 890,0)	(8 111,0)	(6 375,0)	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	(1 890,0)	(8 111,0)	(6 375,0)	
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Նախադպրոցական կրթություն	-	-	-	-
		1	Նախադպրոցական կրթություն	-	-	-	-
		01	Պետական աջակցություն մանկապարտեզներին	240,0	2 552,0	5 444,0	8 505,0
			Մարտունու շրջանի վարչակազմ	240,0	2 552,0	5 444,0	8 505,0
		03	Նախադպրոցական հիմնարկներ	(240,0)	(2 552,0)	(5 444,0)	(8 505,0)
			ԱՀ կառավարություն	(240,0)	(2 552,0)	(5 444,0)	(8 505,0)

	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	-
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	-
		02	Պետական աջակցություն «Շուշիի երաժշտանոցի ընկերակցության Դ. Ղազարյանի անվան բարեգործական գիշերօթիկ երաժշտանոց»-ին	1 195,0	7 708,0	7 708,0	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	1 195,0	7 708,0	7 708,0	
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	(1 195,0)	(7 708,0)	(7 708,0)	-
			Հաղորդի շրջանի վարչակազմ	(1 195,0)	(7 708,0)	(7 708,0)	
	5		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն		-	-	-
		1	Արտադպրոցական դաստիարակություն		1 677,4	4 309,6	4 309,6
		01	Պետական աջակցություն մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններին		1 677,4	4 309,6	4 309,6
			Հաղորդի շրջանի վարչակազմ		1 677,4	4 309,6	4 309,6
		2	Լրացուցիչ կրթություն		(1 677,4)	(4 309,6)	(4 309,6)
		02	Ոչ ֆորմալ կրթության ծրագրեր		(1 677,4)	(4 309,6)	(4 309,6)
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		(1 677,4)	(4 309,6)	(4 309,6)

Աղյուսակ N 2

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2.3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2.3 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
08	2	3	Հաղորդի շրջանի վարչակազմ	-	1 356,0	2 168,4	3 254,2
			«Հաղորդի մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ	-	1 356,0	2 168,4	3 254,2
			Շուշիի շրջանի վարչակազմ	2 214,0	5 598,0	8 854,8	13 021,1
			«Շուշիի մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ	2 214,0	5 598,0	8 854,8	13 021,1
			ԸՆԴԱՄՆԸ	2 214,0	6 954,0	11 023,2	16 275,3

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2.5 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2.5 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
08	2	5	ԱՀ կրթության, գիտության, նշակությունի և սպորտի նախարարություն	(2 214,0)	(6 954,0)	(11 023,2)	(16 275,3)
			«Արցախի պետական կամերային նվագախումբ» ՊՈԱԿ		(1 002,0)	(1 867,8)	(3 040,0)
			«Արցախի ազգային նվագարանների պետական նվագախումբ» ՊՈԱԿ	(2 214,0)	(5 952,0)	(9 155,4)	(13 235,3)
			ԸՆԴԱՄԵՆԸ	(2 214,0)	(6 954,0)	(11 023,2)	(16 275,3)

Աղյուսակ N 4

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
09	1	1	Մարտունու շրջանի վարչակազմ	240,0	2 552,0	5 444,0	8 505,0
			«Գիշու պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ	240,0	2 552,0	5 444,0	8 505,0
			ԸՆԴԱՄԵՆԸ	240,0	2 552,0	5 444,0	8 505,0

Աղյուսակ N 5

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
09	2	1	Հաղրուլի շրջանի վարչակազմ	(1 195,0)	(7 708,0)	(7 708,0)	-
			«Հաղրուլի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	(1 195,0)	(7 708,0)	(7 708,0)	-
			ԸՆԴԱՄԵՆԸ	(1 195,0)	(7 708,0)	(7 708,0)	-

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
09	5	1	Հաղորդի շրջանի վարչակազմ	-	1 677,4	4 309,6	4 309,6
			«Հաղորդի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ		1 677,4	4 309,6	4 309,6
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	1 677,4	4 309,6	4 309,6

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2022թ.

N 397-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 170-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նր նշում է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 170-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 39-րդ, 40-րդ և 42-րդ կետերի 4-րդ սյունակներում «Առաջին» բառը փոխարինել «Երկրորդ» բառով.

2) 41-րդ, 48-րդ և 49-րդ կետերի 4-րդ սյունակներում «Առաջին» բառը փոխարինել «Չորրորդ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2022թ.

N 400-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածի 3-րդ կետում «տեղակալ» բառից առաջ լրացնել «առաջին» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2022թ.

N 402-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 277-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 17-ի «Առանձին կատեգորիայի ներհանրապետական փոխադրումների համար կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 9-ի N 407-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 277-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«10. Վառելիքի ծախսի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{H}}=0.01*HS*S*A*D$$

որտեղ՝ Q_{H} - վառելիքի ծախսն է (լիտր),

0.01 - լիտրը կիլոմետրի հարաբերության գործակիցն է,

HS - վառելիքի ծախսի բազային նորման է (լիտր կամ մ³/100 կիլոմետր),

S - տրանսպորտային միջոցի փաստացի կատարված վազքն է (կիլոմետր),

A - մեկ լիտր վառելիքի շուկայական գինն է (ՀՀ դրամ),

D - վառելիքի ծախսի բազային նորմայի ավելացման ուղղիչ գործակից՝

ա) ձմեռային ժամանակահատվածում ավտոմեքենայի աշխատանքի ընթացքում՝ մինչև 10 տոկոս,

բ) Լեռնային տեղանքներում աշխատանքի ժամանակ՝ կախված ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից՝ 300մ-800մ մինչև 5 տոկոս, 800մ-ից բարձր՝ մինչև 10 տոկոս,

գ) շահագործման մեջ 8 տարվանից ավելի գտնվելու դեպքում մինչև 5 տոկոս,

դ) բեռնատար տրանսպորտային միջոցների և ֆուրգոնների բեռով կատարվող աշխատանքների դեպքում՝ մինչև 10 տոկոս:

Միաժամանակ մի քանի ուղղիչ գործակիցներ կիրառելու դեպքում վառելիքի ծախսի բազային նորմայի մեծությունը սահմանվում է՝ հաշվի առնելով դրանց գումարի մեծությունը:»:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2022թ.

N 404-Ն

ք. Ստեփանակերտ

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր փաստաթղթի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՁեՎ

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

Հաշվառման մակնիշը, հաշվառման համարանիշը _____ տիպարը _____
վկայագիրը _____
ՏՄ տեսակը _____ թափքի տեսակը _____
Թափքի համարը _____ հենասարքի համարը _____
Շարժիչի տեսակը _____ շարժիչի համարը _____
Շարժիչի հզորությունը (ԿՎտ/ձ.ու.) _____ թույլատրելի առավելագույն զանգվածը (կգ) _____
Զանգվածը՝ առանց բեռնվածության (կգ) _____ գույնը _____
Թողարկման տարեթիվը _____ նույնացման համարը _____
Հաշվառման ամսաթիվը _____ 20 թ. ուժի մեջ է մինչև _____ 20 թ.
Սեփականատերը _____

Հաշվառման կամ բնակության վայրը _____

Հաստուկ նշումներ _____

Արցախի Հանրապետության ոստիկանության
«Ճանապարհային ոստիկանություն» ծառայության

_____ Կ.Տ. _____
_____ ստորագրությունը _____ ազգանունը _____

_____ 20 թ.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2022 թվականի ապրիլի 11-ի

«ԱՐՑԱՄԻՆԵՐԳՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՈԱԴԻՈՀԱՃԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 9-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-ին հոդվածները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 24-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 3Ն որոշումը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Արցախի Հանրապետության տարածքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 156,000 ՄՀց և 157,000 ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ տասը տարի գործողության ժամկետով:

2. Հաստատել «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության Արցախի Հանրապետության տարածքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար 156,000 ՄՀց և 157,000 ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսի վճարումը հավաստող անդորրագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի ապրիլի 12-ից:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2022 թվականի ապրիլի 11
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

11 ապրիլի 2022թ.

N 73-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻԻ»
ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ`

1. Անհատ ձեռնարկատեր «ԱԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐԿԱԴԻԻ» (հասցե՝ Արցախի Հանրապետություն, ք.Ստեփանակերտ, Կամո 15) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին ապահովել`

1) տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ. ՀԱՅՐԻՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

13 ապրիլի 2022թ.

N 121-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 6-Ի N 134/Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հուլիսի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողով» ստեղծելու և «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի» կանոնադրությունը հաստատելու մասին» N 134/Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հրամանի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ» բառերով,

2) Հրամանի նախաբանում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը,

3) Հրամանով հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

4) Հրամանով հաստատված հավելված 2-ի 2-րդ, 4-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերի և 21-րդ կետերի «կրթության, գիտության և սպորտի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով, իսկ 3-րդ կետի, 23-րդ կետի 4-րդ ենթակետի, 26-րդ և 27-րդ կետերի «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի ապրիլի 13-ի N 121-Ն հրամանի

«Հավելված 1
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2011 թվականի հուլիսի 6-ի N 134/Ն հրամանի

Կ Ա Ձ Մ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Մ. Համբարձումյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
- Ա. Ապրեսյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնի վարիչ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
- Տ. Սավադյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ
- Մ. Մխիթարյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության աշխատակազմի կրթության պետական տեսչության պետ
- Ռ. Մուսայելյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ
- Ա. Ղուլյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի լեզվի տեսչության պետ
- Ռ. Բոզիյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության հանրակրթության բաժնի վարիչ
- Է. Հովհաննիսյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության նախադպրոցական բաժնի վարիչ
- Ն. Առուշանյան Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» մարտի 2022թ.

N 24

ք. Ստեփանակերտ

**«ԲԵՐԴԱԼԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 25-րդ և 43-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«ԲԵՐԴԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գտնվելու վայրը՝ ԱՀ, քաղաք Ստեփանակերտ, Պարույր Սևակի փողոցի առաջին փակուղի, տուն 10, ՀՎՀՀ՝ 90051949) տրամադրել գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրության լիցենզիա՝ ՊԼ-0382 համարի տակ:

Վ. Բ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«12» ապրիլի 2022թ.

N 37

ք. Ստեփանակերտ

**«ՖԱՎՈՐԻՏ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» և «Առողիտորական գործունեության մասին» օրենքներով և հիմք ընդունելով «ՖԱՎՈՐԻՏ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գտնվելու վայրը՝ ԱՀ, քաղաք Ստեփանակերտ, Հեքիմյան փողոց, շենք 20, բնակարան 25, ՀՎՀՀ՝ 90038255) կողմից ներկայացված դիմումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«ՖԱՎՈՐԻՏ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ԱԾ-0005 համարի տակ տրամադրել առողիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա:

Վ. Բ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

31 մարտի 2022թ.

N 28-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՍԱՄԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 31.03.2022թ. եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերության տրամադրած լիցենզիայի գործունեությունը՝

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1	«ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ» ՓԲԸ ք. Ստեփ., Մ. Բաղրամյան 3/11	ՔՓՄ-270	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակ-կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/0518/02/21
Քաղաքացիական գործ ԸԻԴ/0518/02/21
Նախագահող դատավոր՝ Ն. Գրիգորյան
Դատավորներ՝ Մ. Ավանեսյան
 Կ. Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Հ Ա Ն ՈՒ Ն Ա Ր Ց Ա Մ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

ք.Ստեփանակերտ

12 ապրիլի 2022թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝	Ն. Նարինյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Ի. Կարապետյանի
	Հ. Աբրահամյանի
	Գ. Գրիգորյանի
	Կ. Ղարայանի

քննելով ըստ հայցի «The HALO Trust» (ՀԱԼՈ ԹՐԱՍԹ) միջազգային մարդասիրական բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի ընդդեմ Բորիս Արմենի Ավագյանի՝ «News.am» կոչվող լրատվական գործակալության միջոցով զրպարտություն համարվող փաստացի տվյալները՝ հրապարակված «News.am» լրատվական գործունեություն իրականացնող գործակալության 11.03.2021թ. տարածած տեղեկատվության մեջ, հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու և սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում վճարելու պահանջների մասին ԸԻԴ/0518/02/21 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 4-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

«The HALO Trust» (ՀԱԼՈ ԹՐԱՍԹ) միջազգային մարդասիրական բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի ներկայացուցիչ Ռոման Երիցյանը 2021 թվականի ապրիլի 5-ին ընդդեմ Բորիս Արմենի Ավագյանի հայց է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)՝ «News.am» կոչվող լրատվական գործակալության միջոցով զրպարտություն համարվող փաստացի տվյալները՝ հրապարակված

«News.am» լրատվական գործունեություն իրականացնող գործակալության 11.03.2021թ. տարածած տեղեկատվության մեջ, հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու և սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում վճարելու պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ քաղաքացիական գործով նախնական դատական նիստ է նշանակվել 2021 թվականի նոյեմբերի 17-ին:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Հ.Հարությունյան) 2022 թվականի փետրվարի 11-ի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ վեճն ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննության ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանի 2022 թվականի փետրվարի 18-ի «Վճռի վրիպակն ուղղելու մասին» որոշմամբ վճռի՝ դատական ծախսերին վերաբերող մասում փոփոխություն է կատարվել. Վճռվել է վերադարձնել հայցադիմումի համար վճարված 44.000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամ պետական տուրքը:

Առաջին ատյանի դատարանի 2022 թվականի փետրվարի 11-ի վճռի դեմ հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը 2022 թվականի փետրվարի 25-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ բողոքը և քաղաքացիական գործն Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) դատական կազմին են հանձնվել 2022 թվականի մարտի 3-ին:

Վերաքննիչ դատարանը 2022 թվականի մարտի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ օրենքով սահմանված կարգով ու չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց վերաքննիչ բողոքին կցված չլինելու պատճառաբանությամբ, միաժամանակ արձանագրելով թույլ տրված թերությունները վերացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորության մասին:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2022 թվականի մարտի 9-ին հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքը և քաղաքացիական գործը Գերագույն դատարանի դատական կազմին են հանձնվել 2022 թվականի մարտի 11-ին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետը, ինչի արդյունքում կայացրել է սխալ դատական ակտ:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ բողոքի շարադրմամբ Վերաքննիչ դատարանից խնդրել են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս, ի թիվս այլնի, դեկավարվել նաև «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետով, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից խնդրանքն անտեսվել է:

Շարադրելով «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետի բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ գործի վարույթը կարճելու վերաբերյալ վճռի դեմ ոչ առևտրային կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս ազատվում են պետական տուրք վճարելու պարտականությունից:

Ըստ բողոքի՝ գործում առկա փաստաթղթերի վերլուծությունից հետևում է, որ «The HALO Trust» (ՀԱԼՈ ԹԻՍՏԹ) միջազգային մարդասիրական բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղը ոչ առևտրային կազմակերպություն է, չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, ուստի, վերաքննիչ բողոք ներկայացնելիս պետական տուրք վճարելու պարտականություն կրել չի կարող:

Բողոքաբերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը գտել է, որ վերոգրյալը բավարար է Վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն անհիմն համարելու և այն բեկանելու համար, ուստի խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և բեկանել Վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 4-ի որոշումը:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման համար պետական տուրքի վճարման հետ կապված հարցի վերաբերյալ միասնական դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ և Վերաքննիչ դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետի խախտման հետևանքով առերևույթ դատական սխալի առկայությամբ:

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքի և հիմնավորումների սահմաններում, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել և վերացնել որոշումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԱՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերը սահմանում են յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքներ:

Ըստ Սահմանադրության 74-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային դատաքննության իրավունք:

Գերագույն դատարանը փաստում է, որ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը, դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների իրականացմանը: Միաժամանակ Գերագույն դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում փաստել, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ իրավունք, այն կարող է անհրաժեշտության դեպքում ենթարկվել ողջամիտ և իրավաչափ սահմանափակումների, այդ իրավունքի իրացումն օրյեկտիվորեն ունի որոշակի սահմաններ և շրջանակներ: Դրանք են՝ այն դեպքերը, երբ օրենսդիրը սահմանափակումներ է նախատեսել վերաքննիչ բողոք բերելու համար (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդված), ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերը (միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում), վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը պահպանված չլինելու դեպքերը, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքեր: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը... գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որոշումը Գերագույն դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացնելու օրը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:...

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ բացի նշված դեպքերից օրենսդիրը չի նախատեսել վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ դեպքեր:

Վերաքննիչ դատարանն իր 2022 թվականի մարտի 4-ի որոշմամբ վերադարձրել է հայցվորի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ համաձայն «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ վերաքննիչ բողոքի համար պետք է վճարվեր 60.000 ՀՀ դրամ, որը չի վճարվել, հետևաբար խախտվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Որպեսզի պարզվի, թե Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, թե՛ ոչ, Գերագույն դատարանը սույն որոշմամբ հարկ է համարում անդրադառնալ պետական տուրքի վճարումից ազատելու իրավական ինստիտուտի կիրառման հարցին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, ...հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի՝ «Պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները» վերտառությամբ 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

- ա) պետական տուրքի վճարումից ազատում.
- բ) պետական տուրքի նվազեցում.
- գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում.
- դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում.....:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերը, իսկ նույն օրենքի 30-րդ հոդվածը՝ առանձին վճարողների համար՝ ելնելով նրանց գույքային դրությունից, պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելու դատարանների կամ դատավորների լիազորությունը:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Մասնավորապես, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը

բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարածամկետելու, ...վերաբերյալ հայցերով:

Չնայած նշված իրավանորմի ոչ հստակ ձևակերպված լինելու հանգամանքին, դրա մեկնաբանությունից հետևում է, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են գործի վարույթը կարճելու մասին վճիռը կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու վերաբերյալ բողոքներով, ...:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ «ՀԱԼՈ ԹՐԱՍԹ» ընկերությունը բարեգործական կազմակերպություն է, ոչ առևտրային կազմակերպություն: Հետևաբար, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «ե» կետը կիրառելի է նրա կողմից բերված վերաքննիչ բողոքի նկատմամբ: Ուստի, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման՝ վերաքննիչ բողոքի համար պետական տուրք վճարված չլինելու հիմքով, անհիմն է և չի բխում օրենքի պահանջներից:

Նման պայմաններում Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովել Առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը, դրանով իսկ խախտելով հայցվորի՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, հետևաբար «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի «ե» կետի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկը հիմնավոր է:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝ 1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: ...:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ մասի և 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի (կամ դատավարական իրավունքի) խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման հիմք են հանդիսանում նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի վերանայումից հետո Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի մարտի 4-ի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**